ԶՈՂԱՆՑ ՏՈՒՆ

ԿԱՄ

ՍԱՍՄԱՅ ԾՌԵՐ*

(Գեղաւաշու բարբառ)

ՍԱՆԱՍԱՐ ԵՒ ԲԱՂՏԱՍԱՐ

Ա.

1. Կըլնի—չըլնի մի խայ թագեաւոր կըլնի. տա մի ախչիկ ունի։ Էտ թագեաւորի ախչիկ շատ խոբոտ կըլնի։ Աջմու թագեաւորի տղայի աչք կինի Արևելից թագեաւորի ախչկան։ Աջմու թագեաւորն էլ շատ զօռբա կելնի խաբար կը ղրկի Արևելից թագեաւորի մոտ, որ քու ախչիկ տը տաս յըմ** տղին։

2. Մի էրկու տիր[1] խաբար տը ղրկի, կասի.—«Քիւ ախչիկ տու յըմ տղին»։ Էն էլ կասի. «Ես խայ եմ, տիւ աջամ, ես յիմ ախչիկ չըմ ի տայ»։

3. Աջմու թեակեաւոր կասի.—Թէ քիւ ախչիկ չտաս եմ տղին, ձե[2] յմեն տը մոբթեմ։

4. Ախչիկ որ տը լսայ, կը մտածի ինոր[3] վրէն, կասի.—Ցիմ սաբաբով էտա յմմէն մարթ տը սպանեն, ինոնց տղեները տը մընան յեթիմ, ձի[4] տանիծեն, վերչ զօռով ձի տը առնեն. աղէկն էն ա, որ ես յըմ կամքէօվ էրթամ, ձի չանիծեն. յըմ խոբ թագեաւորութէն էլ գէնա[5] մնայ։

---

* Վէպս գրի առնող Մայր Աթոռի գրաշար Յարութիւն Աւչանը չունէր ընդհանուր վերնագիր, իսկ մեր ընտրածի մասին խօսելիք կ՚ունենանք յառաջաբանում։ Յ. Աւչանին այս վէպը պատմել է Գեղաւաշու Տեշող գիւղացի 25 տարեկան Եղիազար Յակոբեանը. վերջինս էլ լսել է Մեղանցի մի ծեր մանրավաճառից։ Ե. Յակոբեանը վէպս պատմելուց առաջ՝ մէջ–երկու տարի բանւոր էր վաղարշապատում։

Ստեփան Կանայեանց.

** Այս վէպում յըմ. յիմ, յեմ ձեւերի մէջ սկզբնատառ յ-ն պէտք է հնչել գերմաներէն j-ի եւ մեր ե-ի նման իբրեւ մի վանկ։

1. Անգամ։ 2. Զեզ։ 3. Իր։ 4. Ինձ։ 5. Դարձեալ, կրկին։